Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 16.08.2023 թվականի որոշման
Գործում է 28.08.2023 թվականից

ABB – ԷՔՍՏՐԱ+
ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Անշարժ և շարժական գույքի ապահովվածությամբ ֆիզիկական անձանց տրամադրվող վարկային գծերի պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

1	**Վարկային գծի պայմաններ**		
1.1	Վարկառուի/գրավատուի կարգավիճակ	Ֆիզիկական անձ	
1.2	Վարկային գծի ձևակերպման վայր	Բանկի Գլխամասային գրասենյակ և բոլոր մասնաճյուղեր	
1.3	Վարկային գծի արժույթ	ՀՀ դրամ	
1.4	Վարկային գծի տեսակ	Վարկային գիծ	
1.5	Ապահովվածություն	Անշարժ գույք / ցանկացած նպատակային նշանակության/, հողատարածք, տրանսպորտային միջոց	
1.6	Տարեկան անվանական տոկոսադրույք/ տեսակը	Եկամուտների հիմնավորմամբ	Առանց եկամուտների հիմնավորմամբ
		30-60 ամիս՝ 16%- հաստատուն 61 և ավել՝ 17% հաստատուն ճշգրտվող[1]	30-60 ամիս՝ 17.5%- հաստատուն 61 և ավել՝ 18.5%- հաստատուն ճշգրտվող
1.7	Տարեկան փաստացի տոկոսադրույք	18.2%-23.7 %	
1.8	Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ	
1.9	Ժամկետ	30-120 ամիս՝ անշարժ գույքի գրավադրմամբ 30-60 ամիս՝ շարժական գույքի գրավադրմամբ	
1.11	Մարման եղանակ	Վարկային գծի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում (սահմանաչափի ամենամսյա հավասարաչափ նվազեցում անկախ վարկային գծի օգտագործումից) և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում	
1.12	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն (հաշվարկվում է գրավի գնահատված լիկվիդային արժեքի նկատմամբ)	Անշարժ գույքի դեպքում • Գոտի 1 – 70 % • Գոտի 2 – 60 % • Գոտի 3 – 50 %	Անշարժ գույքի դեպքում • Գոտի 1 – 60 % • Գոտի 2 – 50 % • Գոտի 3 – 40 %
		Շարժական գույքի դեպքում (մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոց) 3-8 տարվա թողարկված տմ – ՏՄ-50% Մինչև 3 տարվա ՏՄ– 60%	
1.13	Վարկային գծի նվազագույն գումար	1,500,000 ՀՀ դրամ	
1.14	Վարկային գծի առավելագույն գումար	Եկամուտների հիմնավորմամբ	Առանց եկամուտների հիմնավորմամբ
		50,000,000 ՀՀ դրամ	30,000,000 ՀՀ դրամ
1.15	Վարկային գծի տեսակ	Մասնակի վերականգնվող վարկային գիծ	
1.16	Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող	0%	

[1] Հաստատուն (ճշգրտվող) տոկոսադրույքը կարող է վերանայվել սկսած 37-րդ ամսից: Հաշվարկման համար հիմք է հանդիսանում ABB-հաշվարկային դրույքի սահմանման և փոփոխման կարգը:

	տոկոսադրույք	
1.17	Վարկային գծի տրամադրման եղանակ	Քարտային հաշվին՝ Extra լոկալ քարտին կամ VISA տեսակի քարտերով
1.18	Վաղաժամկետ մարում	մինչև 15,000,000 ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ/ տրամադրված վարկերի/վարկային գծերի դեպքում ՝ 0 ՀՀ դրամ 15,000,001 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավել գումարի վարկային գծերի փակման դիմում ներկայացնելու դեպքում՝ 3%
2	**Բանկի միջնորդավճար**	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրման միանվագ միջնորդավճար	Չի սահմանվում
2.2	Սպասարկման միանվագ միջնորդավճար/գանձվում է տրամադրման պահին/	Գումարի 2%
2.3	Վարկային միջոցների կանխիկացում	Քարտից կանխիկացում Հայբիզնեսբանկի բանկոմատներից՝ 0.3%, Քարտից կանխիկացման մնացած սակագները՝ համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վարկային քարտի համար սահմանված սակագների Կանխիկացում Պոս տերմինալից՝ 0.3 %
2.4	Բանկային հաշվի բացման/փակման վճարներ	Համաձայն Բանկում գործող սակագների
3	**Ապահովվածություն**	
3.1	Գրավի առարկա	• ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք, այդ թվում նաև առանձին հողամաս • Մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոց
3.2	Գույքին ներկայացվող պահանջներ	**Անշարժ գույք** • Պետք է ունենա քարե, պանելային կամ երկաթբետոնե կառուցվածք (բացառությամբ միջնապատերի և միջհարկային ծածկերի), ինչպես նաև հասարակական նշանակության տարածք (խանութ, սրճարան/ռեստորան, վարսավիրանոց, օֆիսային տարածք) • Պետք է ունենա 80 և ավելի տոկոս փաստացի ավարտվածության աստիճան, ինչպես նաև պարտադիր ունենա անցկացված անհրաժեշտ կոմունիկացիաներ • Անշարժ գույքը չպետք է գտնվի 2-րդից ավել աստիճանի վթարային շենքում կամ ունենա 2-րդից ավել վթարայնության աստիճան • Չգտնվի գերակա հանրային շահերի տարածքում • Առանձնատունը չպետք է ունենա ընդհանուր բակային տարածք, 2 և ավել ընդհանուր պատեր, ընդհանուր կամ համատեղ սեփականություն այլ գույքերի հետ • անշարժ գույքը պետք է ապահովված լինի անհրաժեշտ կոմունիկացիաներով (ջուր, հոսանք, կոյուղի) • գրավի առարկա չի կարող լինել այն անշարժ գույքը, որի ընդհանուր վիճակի վերաբերյալ Գնահատող ընկերության կողմից տրվել է անբավարար գնահատական • Միայն հասարակական և բնակելի կառուցապատման հողամասեր, որոնք չունենան կադաստրային արժեքի պարտք • Չունենան մոտեցման և կառուցապատման սահմանափակումներ, ծանրաբեռնված են սերվիտուտով • Գրավի առարկա կարող են հանդիսանալ միայն առաջին և երկրորդ գոտիներում ներառված հողամասերը **Շարժական գույք** • Գրավի առարկա կարող է հանդիսանալ մինչև 8 տարվա արտադրության և

		մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոցը, • Գրավի առարկա կարող է հանդիսանալ միայն Եվրոպայի, Հարավկորեական, ԱՄՆ և Ճապոնիայի արտադրության ավտոմեքենաները (գրավի առարկա չեն կարող հանդիսանալ այլ երկրների արտադրության, այդ թվում նաև Ռուսական արտադրության տրանսպորտային միջոցները) • Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ որպես տաքսի և երթուղային տաքսի շահագործվող/ած տրանսպորտային միջոցները, Կազմակերպությունների կողմից վարձակալությամբ տրամադրվող մեքենաները
3.3	Անշարժ գույքի գրավի գտնվելու վայրը	• Գոտի 1 – ք.Երևան (բացառությամբ Նուբարաշեն, Վարդաշեն, Սարի թաղ, Կոնդ, Նոր Խարբերդ և Նորագյուղ թաղամասերի, Կրիվոյի փ., Ֆրիկի փ. տները), ք.Աբովյան, ք.Արտաշատ, ք.Արմավիր, ք.Աշտարակ,ք.Գյումրի, ք.Դիլիջան, ք.Էջմիածին, ք.Ծաղկաձոր, ք.Մասիս, ք.Ջերմուկ/աջափնյա/, ք.Ստեփանակերտ, ք.Վանաձոր • Գոտի 2 – ք.Ագարակ, ք.Արարատ, ք.Ապարան, ք.Արթիկ, ք.Գորիս, ք.Գավառ, ք.Հրազդան, ք.Մարտունի, ք.Սևան, ք.Եղեգնաձոր, ք.Թալին, ք.Իջևան, ք.Կապան, ք.Մեղրի, ք.Մարալիկ, ք.Նոր-Հաճըն, ք.Նոյեմբերյան, ք.Սիսիան, ք.Սպիտակ, ք.Վեդի, ք.Տաշիր, ք.Քաջարան, և Առինջ, Արգավանդ, Արզնի, Գառնի, Ջովունի, Թաիրով, Մուղնի. Ձորաղբյուր, Պտղնի, Պռոշյան, Քասախ, Ջրվեժ, Փարաքար, Օհանավան, Փարպի, Կարբի, գյուղեր • Գոտի 3 - ՀՀ այլ բնակավայրեր՝ Բանկի համար ընդունելի գույք
3.4	Ապահովություն*	ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույք (բացառությամբ Սարի թաղ, Կոնդ, Նորագյուղ թաղամասերի, Կրիվոյի փ., Ֆրիկի փ. տների), առևտրային նշանակության անշարժ գույք, այդ թվում նաև առանձին հողամաս և տրանսպորտային միջոց, որոնք ընդունելի են Բանկի համար
*որպես լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն: Երաշխավարություն կարող է պահանջվել եթե սեփականության իրավունքը հաճախորդին փոխանցվել է նվիրատվության գործարքի հիման վրա վերջին 5 տարիների ընթացքում:		
4	**Գրավի գնահատում և ապահովագրություն**	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Գնահատումը պետք է իրականացվի Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող Ընկերության կողմից
4.2	Ապահովագրություն	• Անշարժ գույքի գրավի ապահովագրություն - կամավոր • Դժբախտ պատահարներից ապահովագրություն – կամավոր *Ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Անշարժ գույքի գրավի և դժբախտ պատահարներից ապահովագրական գումարները, հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի/վարկային գծի սահմանաչափի նկատմամբ:* <u>Շարժական գույքի գրավի դեպքում՝</u> • Ավտոմեքենայի կասկո ապահովագրություն – պարտադիր *Գրավադրվող գույքի Կասկո ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Ապահովագրական գումարը հաշվարկվում է Վարկի գումարի մնացորդի նկատմամբ.*
5	**Վարկառուի/Գրավատուի/Երաշխավորի և համավարկառուին նկատմամբ պահանջներ**	
5.1	Վարկառու	18-70 տարեկան
* Վարկային գծի սպասարկման ընթացքում հաճախորդի 70 տարեկանը լրանալու դեպքում եթե վարկի մայր գումարի 70% մարված է, ապա հայտը մերժման ենթակա չէ		
5.2	Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող	• Վարկի/Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող ժամկետանց/դասակարգված պարտավորությունների (վարկ, վարկային

	պահանջներ	գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն) բացակայություն • Վերջին 12 ամիսների ընթացքում (գործող/մարված) վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 36 օրացուցային օրը: Սակայն երբ անընդմեջ ուշացումների օրերի քանակը չի գերազանցում 6 օրացույցային օր, մեկ տարվա կտրվածքով ուշացումների քանակը չպետք է գերազանցի 72 օրացույցային օր: Ընդ որում հիմք է ընդունվում մեկ ամսվա ընթացքում բոլոր վարկերի գծով միայն առավելագույն ժամկետանց վարկի օրերի քանակը Այլ ֆինանսական կազմակերպությունից տեղափոխման դեպքում տվյալ վարկը/վարկային գիծը պետք է սպասարկված լինի առնվազն 9 ամիս
5.2	Վարկառուի եկամուտներ	Համաձայն հավելված 1
5.3	ԸՊԵ գործակից (Ընդհանուր պարտքային պարտավորությունների (միջին ամսական) և զուտ եկամուտների հարաբերակցություն)	Եկամուտների հիմնավորմամբ: 70% Առանց եկամուտների հիմնավորմամբ: -
6.	**Լրացուցիչ պայմաններ**	
6.1	Գլխավոր Վարկային Պայմանագիր*	Բանկը հաճախորդի հետ կնքում է ԳՎՊ մինչև 240 ամիս ժամկետով և անշարժ գույքի լիկվիդային արժեքի մինչև 90%-ի չափով (կնքվում է միայն անշարժ գույքի գրավադրմամբ վարկերի հետ)
6.2	Վարկային գծի տրամադրման դրական գործոններ	• Դրական վարկային պատմություն • Առկայության դեպքում կայուն դրամական հոսքեր • Գրավի առարկայի համապատասխանությունը Բանկի պահանջներին • Այլ գործոններ
6.3	Վարկային գծի մերժման գործոններ	• Բացասական վարկային պատմություն • Գրավի առարկայի անհամապատասխանությունը Բանկի պահանջներին • Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում • Այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը • Այլ գործոններ
6.4	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	Պահանջվող բոլոր փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 7 աշխատանքային օր
6.5	Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ	1 աշխատանքային օր
6.6	Որոշման վավերականության առավելագույն ժամկետ	30 օրացույցային օր
6.7	Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ	Համաձայն հավելված 2
6.8	Վարկի վճարման օր փոփոխելու դեպքում	10,000 ՀՀ դրամ
6.9	Վարկային արձակուրդի տրամադրում (սույն կետը կիրառելի է միայն անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում)	❖ ***Վարկային արձակուրդի տրամադրման ժամկետ*** 1-10 ամիս (Վարկի ամբողջ ժամանակահատվածում) ❖ ***Վարկային արձակուրդի տրամադրման պարբերականությունը*** Վարկային արձակուրդը կարող է տրամադրվել մեկ տարում առավելագույնը 2 անգամ՝ մինչև 2 ամիս ժամկետով, ընդհանուր վարկի գործողության ընթացքում չգերազանցելով գումարային 10 ամիսը (ընդ որում արձակուրդային ժամկետները չեն հաջորդել մեկը մյուսին): ❖ ***Վարկային արձակուրդի ընթացքում մարումներ*** Վարկային արձակուրդի տրամադրումն իրականացվում է միայն Վարկի մայր գումարի համար, որի ընթացքում վճարվում են միայն հաշվեգրված տոկոսները, իսկ այդ ամիսների գծով նախատեսված վարկի գումարի մարումները հավասարաչափ բաշխվում են վարկի մնացած ժամկետի վրա:

		❖ ***Վարկային արձակուրդի տրամադրման միանվագ միջնորդավճար /հիմք է ընդունվում վարկի մնացորդային գումարը/*** • Մինչև 2.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ • 2.000.001 – 5.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 20,000 ՀՀ դրամ • 5.000.001 – 15.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 35,000 ՀՀ դրամ • 15.000.001 – 35.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 50,000 ՀՀ դրամ • 35.000.000 ՀՀ դրամ և ավել գումարի դեպքում՝ 60,000 ՀՀ դրամ ❖ ***Վարկային արձակուրդից կարող են օգտվեն ABB – էքստրա վարկ ունեցող վարկառուները, ովքեր*** 1. Վարկային արձակուրդի որոշում կայացնելու պահին Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն 5.2 կետի պահանջներին, 2. Բանկում գործող ABB–էքստրա վարկը պետք է սպասարկված լինի առնվազն 1 տարի, եթե տվյալ վարկառուն նախկինում Բանկում այլ վարկային պարտավորություններ չի ունեցել, 3. 2-րդ կետի պայմանը կիրառելի չէ, եթե Վարկառուն Բանկում վերջին երեք տարվա ընթացքում ունեցել է վարկային պարտավորություններ և ուշացումների քանակը չի գերազանցել սույն ամփոփագրի 5.2 կետում նշված ժամկետները
6.10	***Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում***	• *Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,13% չափով,* • *Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝* *1) <u>Տույժ/տուգանքներ</u>* *2) <u>Տոկոսագումարներ</u>* *3) <u>Մայր գումար</u>* • *Վարկը/Վարկային գիծը Պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի մարումը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով*
		Վարկառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն 7 աշխատանքային օր հետո այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձեվավորվում է վարկառուի վարկային պատմությունը: վարկառուն իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը: Ուշադրություն՝ վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն
		Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձել վարկառուի այլ գույքից:
6.11	***Հաճախորդի այլ ծախսեր***	✓ *Գրավի գնահատման հետ կապված ծախսեր՝ համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների (12.000-35.000 ՀՀ դրամ)* ✓ *Միասնական տեղեկանք՝ 10.500 ՀՀ դրամ* ✓ *Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (13.000-20.000 ՀՀ դրամ)* ✓ *Կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր (26.000 ՀՀ դրամ)*
		- ***Պլաստիկ քարտի տարեկան սպասարկման վճար (3,000-30,000 ՀՀ դրամ)*** Վարկային գծի պայմանագրի ողջ ժամանակահատվածում պլաստիկ քարտի առկայությունը պարտադիր է (քարտի

			կորստի կամ ժամկետը լրանալու դեպքում այն վերաթողարկվում է):
7	**Վերավարկավորման պայմաններ**		
7.1	Վերավարկավորման պայմաններ	1.6 կետում նշված տոկոսադրույք՝ նվազեցված 1 տոկոսային կետով	
7.2	Վարկի գումար	Առավելագույն եւ նվազագույն գումարները համաձայն սույն պայմանների 1.14-րդ և 1.15-րդ կետերի	
7.3	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Չի սահմանվում	
7.4	Գրավադրման համար իրականացվող ծախսեր*	Բանկի կողմից իրականացվող ծախսերն են. • Գրավի առարկայի գնահատման վճար • ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար • Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման վճար • Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական իրավասու մարմնում գրանցման վճար	
*Ծախսերը Բանկի կողմից իրականացվելու դեպքում, եթե վարկառուն վարկն ամբողջությամբ վաղաժամկետ մարում է տեղափոխմանը հաջորդող 24 ամիսների ընթացքում, ապա վարկառուն փոխհատուցում է սույն կետում նշված Բանկի կողմից կատարված ծախսերը			
7.5	Այլ պահանջներ	• Այլ բանկերում/վարկային կազմակերպություններում անշարժ կամ շարժական գույքի գրավով գործող նվազագույնը 9 ամիս սպասարկված պարտավորությունների տեղափոխում՝ գումարի ավելացման հնարավորությամբ, • վերավարկավորումը հնարավոր է իրականացնել վարկառուի հետ փոխկապակցված անձանց անունով: Սույն պայմաններով փոխկապակցված անձ է համարվում վարկառուի հայրը, մայրը, երեխան, ամուսինը, քույրը, եղբայրը: Ընդ որում, Բանկի կողմից կարող է պահանջվել բարեկամական կապը հավաստող փաստաթուղթ (ամուսնության վկայական, ծննդյան վկայական և այլն) • Վերավարկավորման մնացած պայմանները համաձայն ԷՔՍՏՐԱ վարկատեսակի պայմանների	

Տեղեկատվություն երաշխավորների համար.

- Եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:
- Հաղորդակցումը իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով:
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին:
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ:
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

Զգուշացում՝

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք չկատարեք կամ ոչ պատշաճ կատարեք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները եվ վարկի տրամադրման եվ սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եվ չափերով կատարելու դեպքում: տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգին կարող եք գտնել **ԱՅՍՏԵՂ:**

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.
Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.

- Վարկի գումար 10,000,000 ՀՀ դրամ
- Ժամկետ – 120 ամիս
- Տարեկան տոկոսադրույք – 16%
- Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար – վարկի գումարի 2%
- Վարկային միջոցների կանխիկացում- 0.3%
- Գրավի առարկայի գնահատում – 20,000 ՀՀ դրամ
- Միասնական տեղեկանք- 10,500 ՀՀ դրամ
- Նոտարական վճար – 15,000 ՀՀ դրամ
- Կադաստրային վճար – 26,000 ՀՀ դրամ
- Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 18,4 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 7 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին՝ վարկը նպատակային չօգտագործելու, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չիրականացնելու դեպքում:

Ուշադրություն՝

Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ տվյալները ոիղարկում է վարկային բյուրո, որտեղ ձեվավորվում է ձեր վարկային պատմությունը: դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել ձեր վարկային պատմությունը:

Ուշադրություն՝

Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Ուշադրություն՝

Վարկառուն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից եվ ապահովում է գաղտնիություն:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

Ուշադրություն՝

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:

Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: